# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.03.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**
**թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/12**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի 02.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Մեգիէլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 02.02.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով ընթացակարգին (հետայսու՝ Ընթացակարգ) սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել մեկ մասնակից, մինչդեռ՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացվել 3 մասնակցի կողմից:

Արձանագրության 2.1 կետով հանձնաժողովն արձանագրել է «ԱՐ-Մեդիկա» և «Մեգիէլ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը համակարգի կողմից գնահատվել են հետագա գնահատման համար անընդունելի (հանձնաժողովը հայտերը բացելու և գնահատելու հնարավորություն չի ունեցել (էլեկտրոնային հայտերին որևէ փաստաթուղթ կցված չէր):

Մրցույթին մասնակցելու համար Ընկերությունը հայտը ներբեռնել է armeps.am կայքում տեղադրված հրահանգների համաձայն, որից հետո համակարգի ավտոմատ ծանուցմամբ ստացվել է պատասխան նամակ, որ մուտքագրումը հաջողությամբ ներբեռնվել է, և տրամադրել է ծածկագիր՝ ընթացքին ծանոթանալու նպատակով:

Արձանագրության 3.5 կետով հանձնաժողովն արձանագրել է (28.12.2017թ նիստ), որ «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված վճարման պահանջագրում էլեկտրոնային ստորագրությունը դրված է, ոչ թե «18ա» դաշտում, այլ փաստաթղթի ներքևի հատվածում: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշել է դիմել մասնակցի կողմից նշված «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ին՝ պարզելու համար, արդյոք «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման փաստաթուղթն անհրաժեշտության դեպքում կարող է բավարար լինել բանկի կողմից վճարում իրականացնելու համար:

Հանձնաժողովը սույն հարցադրման պատասխանը չստանալու պարագայում, հիմք ընդունելով պատվիրատուի ղեկավարի հանձնարարությունը, արձանագրության 4.1 կետով արձանագրել է 29.01.2018թ էլեկտրոնային գնահատման արդյունքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-12-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ն:

Ուսումնասիրելով «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագիրն արձանագրում ենք, որ «18բ» դաշտում բացակայում է կնիքի առկայությունը, որը քննարկման առակա չի դարձվել հանձնաժողովի կողմից: Համաձայն պատվիրատուի հրավերի՝ կնիքի առկայությունը պարտադիր է:

Ընկերությունը գտնում է, որ հանձնաժողովի գործողություններն իրավաչափ չեն, Ընթացակարգը տեղի է ունեցել օրենքի և այլ իրավական ակտերի խախտմամբ, որի արդյունքում կայացված որոշումը չի կարող իրավական հետևանք առաջացնել, քանի որ խախտվել է Ընկերության Ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը»:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի գնումների գործընթացի սկզբունքն է «գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում»:

Հանձնաժողովը չի առաջնորդվել սույն սկզբունքով, քանի որ Ընկերության հայտի ներբեռման արդյունքում համակարգը թույլի չի տվել դրա հասնաելիությունը և Ընթացակարգին մասնակցության հնարավորությունը սահմանափակել է, որի արդյունքում մրցույթին մասնակցել է երեք մասնակիցներից մեկը և կարգավորող իրավանորմերի խախտմամբ համարվել է մրցույթի հաղթող: Առանձնակի ուշադրության է արժանի այն իրողությունը, որ հաղթող մասնակցի գնային առաջարկը բարձր է եղել, քան կարող էին լինել մյուս երկու մասնակիցների գնային առաջարկը և ապրանքների որակական հատկանիշները:

Հանձնաժողովի այն պատճառաբանությունը, որ Ընկերության հայտը բացելու և գնահատելու հնարավորություն չի ունեցել, չունի որևէ իրավական և փաստական հիմնավորում, քանի որ Ընկերությունն անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներբեռնելուց հետո ստացել է «armeps» համակարգի հաստատումը:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի՝ «գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինն իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները»:

Այն, որ համակարգի սպասարկումը լիազոր մարմնի կողմից չի իրականացվել պատշաճ, որի արդյունքում Ընկերության ներկայացրած փաստաթղթերը հասնաելի չեն եղել հանձնաձողովին Ընթացակարգով գնահատելու համար, բացասական հետևանքը չի կարող կրել հայտ ներկայացնող Ընկերությունը: Այդ պարագայում հանձնաժողովը պետք է ղեկավարվեր գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքով և հայտարարեր մրցույթը չկայացած:

Հանձնաժողովն արձանագրել էր, որ վճարման պահանջագրի «18ա» դաշտը ստորագրված չէ: Համաձայն հրավերի՝ «18ա» դաշտը չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

Պահանջվող պայմանագրի պատճենը բացակայել է ներկայացված փաթեթում:

Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի փաստաթղթերով ներկայացրած տեղեկատվության հավաստիության վերաբերյալ, մասնավորապես՝ վճարման

պահանջագրի առումով, հանձնաժողովը իրականացրել է հարցում և առանց ներկայացված տեղեկատվության հավաստիության հաստատման վերաբերյալ պատասխան ստանալով, մոտ մեկ ամիս անց, մասնակցին ճանաչել է 1-ին տեղ զբաղեցնող:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած վճարման պահանջագրի ուսումնասիրության արդյունքում արձանագրում ենք, որ դրանում «18բ» դաշտում բացակայում է կնիքը, որը պարտադիր պայման է, քանի որ կնիքի բացակայության պարագայում բանկի կողմից վճարում չի կատարվում: Կնիքի պարտադիր առկայությունը վիճելի և հայեցողական գնահատում չի կարող ենթադրել, քանի որ այն հաստատված է ինչպես հրավերով, այնպես էլ՝ գործարար շրջանառության սովորույթով և գնման գործընթացի տարիների փորձով:

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի հանձնաժողովը մերժում է հայտը, եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովի կողմից օրենքի և այլ իրավական ակտերի, հրավերի պահանջներով չառաջնորդվելու արդյունքում խախտվել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի իրավունքը:

Իրավական նորմերի խախտմամբ ընդունված որոշումները չեն կարող առաջացնել իրավական հետևանք:

Ի լրումն ներկայացված բողոքի Ընկերությունը գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Թիվ 3 արձանագրության ուսումնասիրության արդյունքում արձանագրում ենք, որ 3.5 կետով, որը վերաբերում է վճարման պահանջագրի «18ա» դաշտի առնչությամբ բանկին հարցում կատարելու հարցին, հանձնաժողովի 5 անդամներից 4-ը կողմ է քվեարկել և 1-ը՝ դեմ: Դեմ քվեարկող հանձնաժողովի անդամը հավանաբար այլ կարծիք է ունեցել քննարկվող հարցի վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Եթե գնահատող հանձնաժողովի անդամը կամ մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն հոդվածի 3-րդ մասում նշված արձանագրությանը»:

Իսկ նշված հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ «Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունն ի թիվս այլի պարունակում է՝

- տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.
- տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
- տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների եւ պատասխանների մասին:

Այսպիսով, արձանագրության 3.5 կետով արձանագրվել է, որ քննարկվող հարցի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի մեկ անդամը դեմ է եղել և հավանաբար պետք է ներկայացրած լինի դեմ լինելու վերաբերյալ տեսակետ, կարծիք, որի ներկայացման համար օրենքը սահմանում է գրավոր ընթացակարգ, որն էլ պետք է կցվի արձանագրությանը:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ստացել է թիվ 3 արձանագրությունը, բայց Ընկերությանը չի տրամադրվել արձանագրության մաս կազվող գնահատող հանձնաժողովի անդամի այլ գրավոր դիրքորոշումը (հատուկ կարծիք):

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետի չկայացած հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ԱՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 և ծածկագրով գնման ընթացակարգը:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Փարիզյանը և Ընկերության լիազորված ներկայացուցիչ Անետա Սարգսյանը:

## 2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.02.2018թ. թիվ ԴՎԱ/482 գրությամբ Խորհրդին հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական գործիքների և պարագաների գնման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 3 մասնակիցներ, որոնցից 2-ի՝ այդ թվում նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը Armeps համակարգի կողմից գնահատվել են հետագա գնահատման համար անընդունելի, քանի

որ վերջիններիս որևէ փաստաթուղթ կցված չի եղել, հետևաբար ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել վերջիններս ուսումնասիրելու և գնահատելու:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստը, հայտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը որոշում կայացրել է գնումների ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և առնվազն անընդունելի է Ընկերության բողոքում նշված՝ գնահատող հանձնաժողովին հասցեագրված մեղադրանքն առ այն, որ տվյալ որոշումը կայացնելու համար հանձնաժողովը չունի որևէ իրավական և փաստական հիմնավորում: Ավելին՝ բողոքի էությունից տպավորություն է ստեղծվում, որ Ընկերության աշխատակիցների (կամ համակարգի) կողմից թույլ տրված տեխնիկական բնույթի բացթողումների արդյունքները վերագրվել են գնահատող հանձնաժողովին:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստի կասեցման վերաբերյալ հայտնում եմ, որ հաշվի առնելով այն փաստը, որ ընկերություններին սպասարկող բանկերի կողմից հաճախակի բացասական պատասխան է ստացվել մասնակիցների՝ լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերի ու կից վճարման պահանջագրերի կատարման վերաբերյալ, հետագա հնարավոր ռիսկերից խուսափելու նպատակով հանձնաժողովը որոշում է կայացրել հարցում կատարել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընկերությանը սպասարկող բանկին:

Պատասխանների ստացման ժամկետները հաշվի առնելով և ՀՀ ԶՈՒ անձնակազմի ապահովման գործընթացը չխափանելու նպատակով, պատվիրատուի ղեկավարի կողմից հանձնարարվել է հայտերը գնահատել ըստ էության՝ չսպասելով բանկերի պատասխաններին, առաջնորդվելով գնումների ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության պահանջներով, գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել շարունակել էլեկտրոնային գնահատումը:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն պնդմանը, թե «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագիրը պետք է կնքված լիներ, ապա Ընկերությանն առաջարկում ենք ուսումնասիրել ընթացակարգի հրավերի 8.19 կետով նախատեսված պահանջը, որից պարզ է դառնում, որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն պետք է ներկայացված հայտում առկա փաստաթղթերը հաստատեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է

տեսանելի լիներ փաստաթղթերի վրա. մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը ամբողջությամբ համապատասխանում է նշված պահանջներին:

Հարկ եմ համարում նշել նաև, որ «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ից ստացվել է առ 22.01.2018թ. թիվ 3,4-205 գրությունը, որի համաձայն «Հաճախորդի պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հավաստող փաստաթղթերը Բանկ ներկայացնելու դեպքում Բանկը կկատարի հաճախորդի վճարման հանձնարարականը», այսինքն, բողոքաբերի ենթադրությունը առ այն, որ կնիքի բացակայության պարագայում բանկի կողմից վճարում չի կատարվի, ըստ էության չի համապատասխանում իրականությունը:

Անհիմն է նաև մասնակցի պնդումը առ այն, որ հաղթող մասնակցի գնային առաջարկը բարձր է եղել, քան կարող էին լինել մյուս մասնակիցների գները և ապրանքների որակական հատկանիշները, այն պարագայում, երբ բացի «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հայտից ուրիշ որևէ մասնակցի հայտում առկա տեղեկություն հնարավոր չի եղել տեսնել, հետևաբար անհասկանալի է, թե որ աղբյուրից է օգտվել բողոքաբերը, նման ենթադրություն անելու համար:

Վերոնշյալից ելնելով հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումներն իրավաչափ են և Ընկերության բողոքը ենթակա է մերժման:

Խորհրդի նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Նորայր Հրությունյանը:

**<u>3. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված միջնորդությամբ ներգրավվել է որպես երրորդ կողմ:

««Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքում մեջբերված է Արձանագրության միայն 1.1 կետը, առ այն որ հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգին սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել մեկ մասնակից, մինչդեռ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից տրամադրվում է ոչ ամբողջական տեղեկատվություն, քանի որ Արձանագրության կետերն առանձին դիտարկելիս հնարավոր չի լինի ամբողջությամբ ընկալել հանձնաժողովի կողմից իրականացրած ողջ գործընթացը: «Մեգիէլ» ՍՊԸ-ն մեջ բերել է

Արձանագրության 2.1 կետը, որով հանձնաժողովն արձանագրել է՝ «ԱՐ-Մեդիկա» և «Մեգիէլ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը համակարգի կողմից գնահատվել են հետագա գնահատման համար անընդունելի (հանձնաժողովը հայտերը բացելու կամ գնահատելու հնարավորություն չի ունեցել (էլեկտրոնային հայտերին որևէ փաստաթուղթ կցված չէր)): Այսինքն, հանձնաձողովը արձանագրել է «Մեգիէլ» ՍՊԸ կողմից հայտի ներկայացման փաստը:

Իր կողմից պատշաճ հայտ ներկայացնելու հանգմանքը «Մեգիէլ» ՍՊԸ-ն հիմնավորում է armeps.am համակարգի ավտոմատ ծանուցմամբ ստացված հաջողությամբ ներբեռնելու մասին պատասխան նամակով: Մինչդեռ ակնհայտ է, որ սույն փաստարկով բողոքարկող կողմը փորձում է մոլորության մեջ գցել բողոքարկման հանձնաժողովին, քանի որ armeps.am համակարգի փորձառու օգտատերերը քաջատեղյակ են, որ հայտի բեռնման և դրա վերաբերյալ ավտոմատ ծանուցման փաստը դեռևս չի երաշխավորում հայտի բացումը: Քանզի հայտի լրացման փուլում ցանկացած վրիպակի առկայության դեպքում հայտը Պատվիրատուի մոտ չի բացվում (բեռնված թղթապանակը երևում է դատարկ): Այսինքն, ծանուցմամբ հավաստվել է բողոքարկողի կողմից հայտի և ոչ թե կից փաստաթղթերի հաջողությամբ ներբեռնման փաստը, ինչը արձանագրվել է հանձնաժողովի կողմից:

«Մեգիէլ» ՍՊԸ-ի այն փաստարկը, թե իբրև հանձնաժողովն արձանագրել է, որ վճարման պահանջագրի «18ա» դաշտը «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ կողմից ստորագրված չէ, չի համապատասխանում իրականությանը, Արձանագրությունում նման նշում առկա չէ: Արձանագրության 3.5 կետով հանձնաժողովն արձանագրել է, որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագրում էլեկտրոնային ստորագրությունը դրված է ոչ թե «18ա» դաշտում, այլ՝ փաստաթղթի ներքևի հատվածում: Ինչպես նշված է Արձանագրությունում հարցումը կատարվել է պարզելու համար, թե արդյոք նման ձևով վճարման փաստաթուղթը բավարար է անհրաժեշտության դեպքում բանկի կողմից վճարում կատարելու համար: ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 07.12.2017թ. թիվ 2 որոշմամբ հաստատված հրավերով նախատեսված վճարման պահանջագրում առկա է ստորագրության համար 4 դաշտ, որոնցից վճարողին վերաբերում է միայն «18ա» և «18բ» դաշտերը: «18ա» դաշտում պետք է դրվի վճարողի ստորագրությունը: «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ կողմից վճարման պահանջագիրը ստորագրվել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ պահանջագրի ներքևի հատվածում: Համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային

ստորագրությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված էլեկտրոնային փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով պահպանված, եթե պահպանվել են նաև էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները: Էլեկտրոնային թվային ստորագրության պատշաճ լինելու վերաբերյալ այլ պահանջներ օրենքով սահմանված չեն: Ուստի, կարծում ենք հարցման անհրաժեշտությունը առհասարակ չի եղել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նշված հարցման պատասխանը բանկի կողմից ուղարկվել է հանձնաժողովին 22.01.2018թ., որը ստացվել է հանձանժողովի կողմից 24.01.2018թ., որով բանկը հավաստել է որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին է ներկայացրել գրավոր հանձնարարական իր՝ բանկում առկա հաշվին սառեցնել 6.295.855 ՀՀ դրամ և ՀՀ ՊՆ կողմից Օրենքով սահմանված կարգով գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթերը բանկ ներկայացնելու դեպքում ՀՀ ՊՆ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության 900005000741 Հ/Հ անվերապահորեն փոխանցել վերոնշյալ սառեցված գումարը: Բանկը հավաստել է, որ նշվածը հաշվի առնելով՝ ՀՀ ՊՆ կողմից Օրենքով սահմանված կարգով գնման ընթացակարգին մասնակցելուց բխող հաճախորդի պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հավաստող փաստաթղթեր բանկ ներկայացնելու դեպքում բանկը կկատարի հաճախորդի վճարման հանձնարարականը: Հարկ ենք համարում նշել, որ բանկի պատասխանի վերաբերյալ արձանագրությունում նշում կատարելու կամ չկատարելու հանգամանքը առնչվում է միայն «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ շահերին, և այդ մասով շահագրգիռ անձ կարող է հանդիսանալ միայն «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, մինդեռ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն արձանագրության մեջ նշելու մասով որևէ առարկություն չունի, առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկի պատասխանը դրական էր և որևէ ազդեցություն չէր կարող ունենալ ընթացակարգի արդյունքների վրա:

Ինչպես արդեն նշվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 07.12.2017թ. թիվ 2 որոշմամբ հաստատված հրավերով նախատեսված վճարման պահանջագրում առկա է ստորագրության համար 4 դաշտ, որոնցից վճարողին վերաբերում է միայն «18ա» և «18բ» դաշտերը: «18բ» դաշտում նախատեսված է «Վճարողի կնիքի տեղը (Կ.Տ)»: Հրավերում առկա «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» «Վավերապայմանի

լրացման պահանջը» սյունակի «18բ» տողում նշված է «պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում: Ոչ պարտադիր էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում»: Հետևաբար «Մեգիէլ» ՍՊԸ-ի բողոքարկումն անհիմն է, քանի որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը վճարման պահանջագրում առկա է, և համաձայն «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» «18բ» տողի կնիքի առկայությունն այլևս պարտադիր չէ: Նշվածից ակնհայտ է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը կիրառելի չէր գնահատման հանձնաժողովի կողմից և այն չէր կարող հիմք հանդիսանալ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու համար:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Դիլանյանը:

**4. ԳԲԽ-ԷՍ-2018/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.**

Խորհուրդն ուսումնասիրել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի 02.02.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված 09.02.2018թ. թիվ ԴՎԱ/482 գրավոր դիրքորոշումը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 15.12.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, 15.12.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը, որպես երրորդ կողմ ներգրավված «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 15.12.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով արձանագրել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտը համակարգի կողմից գնահատվել են հետագա գնահատման համար

անընդունելի (հանձնաժողովը հայտերը բացելու և գնահատելու հնարավորություն չի ունեցել (էլեկտրոնային հայտերին որևէ փաստաթուղթ կցված չէր):

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 02.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացրել է բողոք որով հայտնել է, որ Հանձնաժողովը 15.12.2017թ. թիվ 3 արձանագրության 2.1 կետով արձանագրել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտը համակարգի կողմից գնահատվել է հետագա գնահատման համար անընդունելի՝ էլեկտրոնային հայտին որևէ փաստաթուղթ կցված չլինելու հիմնավորմամբ, մինչդեռ Ընկերությունը փաստաթղթերի փաթեթը ներբեռնելուց հետո ստացել է համակարգի հաստատումը:

Բողոքի քննության նպատակով 15.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը Armeps համակարգի կողմից գնահատվել են հետագա գնահատման համար անընդունելի, քանի որ վերջիններիս որևէ փաստաթուղթ կցված չի եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 6-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային գնումների համակարգն ունի հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները կոդավորելու և մինչև հայտերի բացման պահն այդ տվյալների ապակոդավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն:

Բողոքի քննության վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով Խորհուրդը համապատասխան հարցում է ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս եզրակացությունը ստանալու համար:

Ի պատասխան Խորհրդի հարցմանը, ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.03.2017թ. գրությամբ տրամադրել է եզրակացություն, առ այն, որ Ընկերության կողմից նշված խնդրի լուծման համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը՝ տեղեկացրել է, որ ՀՀ պաշտպանության կարիքների համար հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8 ծածկագրով ընթացակարգում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը ապակոդավորվել և առկա է, ուղղակի այն դատարկ է՝ այսինքն հայտի փաթեթը պատշաճ կերպով չի կազմվել և կցվել մասնակցի կողմից:

Խորհուրդն արձանագրում է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգ է ներբեռնվել դատարկ՝ առանց Հրավերով սահմանված փաստաթղթերով ներկայացված տեղեկատվության, ինչը և հիմք է հանդիսացել Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու համար:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ:

Խորհուրդը արձանագրում է նաև, որ ներկայացված բողոքով չի վիճարկվում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ հայտը Հանձնաժողովի կողմից բավարար գնահատելու հարցը, հետևաբար Խորհուրդը չի անդրադառնում Բողոքի քննության ընթացքում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատելու վերաբերյալ բերված կարծիքներին և դիրքորոշումներին:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 02.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝** **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**